ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2024 թվականի N 113 - Ն

ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺՈՎ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ՏՎՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՆԿԱՆԽԵԼԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱԿՏԻՎԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՐԿԻ ԿԱՄ ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՅԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՉԱՓԵՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետը, 19-րդ հոդվածի 3.1-ին մասը, 55-րդ հոդվածի 12. 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել՝

1) անհաղթահարելի ուժով՝ արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքներով պայմանավորված հարկի կամ հարկման բազայի նվազեցման կարգը, չափերը և ժամանակահատվածը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) անհաղթահարելի ուժով՝ արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքներով պայմանավորված ակտիվի սկզբնական արժեքի որոշման և ծախսերի փաստաթղթավորման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.01.2024

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ